

ՀՈԳԵԽՈՐ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ*

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԵՒ ԵՀՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐԸ (ՄԱՍ Բ.)

«Նոյնպես եւ Հոգին Սուրբ միշտ յինքեան է,
եւ ի Տօրէ եւ յՈրդոյ ոչ բաժանի,
վասն զի միշտելումն ասի, եւ հանապազաբիւումն,
որպէս եւ Տէրն ասէ. Հոգին ճշմարտութեան,
որ ի Տօրէ եղանէ, նա վկայեացէ վասն իմ»²:

Պողոս առաքյալը, երբ խնդրում է հոռմեացիներին աղոթակից լինել իր համար, ասում է.

«Եղբայրներ, աղաչում եմ ձեզ մեր Տէր խնուս Քրիստոսով եւ **Հոգու սիրով**՝ մարտակից լինել ինձ, ինձ համար Աստուծոյ ուղղված աղոթքների մեջ...»³:

Ընդգծված բառերի հունարենն է. **τῆς ἀγάπης τοῦ πνεύματος**, որոնց ՆԱԹ-ը թարգմանել է որպէս **ոգու սեր**:

Պողոս առաքյալն օգտագործելով **Հոգու սեր** բառերը, մի անգամ եւս շեշտում է, որ Հոգին նաեւ սեր ունի, այսինքն՝ սիրում է: Ա. Յովհ. Դ. 8-ում հանդիպում ենք նույն **ἀγάπης** բառին՝ **ὁ μὴ ἀγαπῶν οὐκ ἔγνω τὸν θεόν ὅτι ὁ θεὸς ἀγάπη ἐστίν**, իսկ հայերենը այս րեւսին ունի՝ «Իսկ նա, ով չի սիրում, չի ճանաչում Աստուծոյ, քանի որ Աստված սեր է»: Համադրելով այս երկու համարները, կարելի է ասել, որ Հոգին, որն օժտված է սիրով, սիրելու կարողությամբ՝ նույն Աստվածն է: Հոգու դիմավոր լինելու ամենաախտաբանէ բացարկայան հենց այս սիրո մեջ է թաքնված: Դեմք չունեցող, առարկայական «գործուն ուժը» ինչպէ՞ս կարող է սիրել - nonsense:

Ստորեւ բերում ենք Ս. Հոգուն՝ որպէս անձ ներկայացնող մի քանի համարներ, համապատասխան մեկնաբանությամբ, համադրելով դրանք բրուկլինյան մեկնաբանության հետ:

* Սկիզբը՝ «Էջմիածին», 2012, Ա.-Է.:

2 «Կնիք Հառապոյ Ընդհանուր Սուրբ Եկեղեցոյ», Կարապետ Եպիսկոպոս, Ս. Էջմիածին, 1914, էջ 54: Նկատենք, որ ավերարանիցն ասում է **ի Տօրէ կրանէ**, այլ ոչ թէ **ի Տօրէ կրեան է**, որ ցույց է տալիս Ս. Հոգու հավիտենական բխումն Հորից, այսինքն՝ Ս. Հոգու սկիզբը Հորից, ընդգծելով Նրա նույնությունը Հոր հետ (Չարեհ արք. Ազնաուրեան, Մեկնութիւն Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցոյ Հառապամբին, Վալես, 2008, էջ 270):

3 Հռմ. ԺԵ. 30:

Տոմ. Ը. 26

Այսպիսի առաքյալը Ս. Նոգուն վերագրում է նաև մի հարկանիշ, որն անհնար է վերագրել անձ, դեմք չունեցող գործուն ուժերին:

«Նույնպես և Նոգին օգնության է հասնում մեր քվարություններին. որովհետև մենք աղոթում ենք և չգիտենք, թե ինչպես արժան է աղոթել. բայց Նոգին ինքը բարեխոս է լինում մեզ անմոռու հառաչանքով»:

ՆԱԹ-ի համապարասխան համարն է.

«Նույնպես էլ ոգին է օգնության հասնում մեր թուլություններին, որովհետև չգիտենք ինչի մասին աղոթել (երբ անհրաժեշտ է դա անել), սակայն ոգին բարեխոսում է մեզ համար, երբ մենք հառաչում ենք, թեև անձայն»:

Մտացվում է, որ Ս. Նոգին ոչ միայն մեզ սովորեցնում է, թե ինչպես պետք է աղոթել, այլ նաև մեզ համար «անմոռու հառաչանքով» բարեխոսում է, այսինքն՝ Ինքն աղոթում է, մի բան, որ առարկայական, անդամ ցանկացած գոյության վերագրելը *nonsense* է:

ՆԱԹ-ի թարգմանությունից երևում է, թե ինչպես են բրուկլինյան թարգմանիչները աղավաղել այդ համարը: Նպատակը պարզ է. ամեն կերպ այդ «ոգուն» գրկել դեմքի հարկանիշներից: Նամարի վերջին հարվածը շեշտում է Նոգու «անմոռու հառաչանք»-ը, այսինքն՝ այդ վերաբերում է Նոգուն, մինչդեռ ՆԱԹ-ը վերագրում է մարդուն՝ «երբ **մենք** հառաչում ենք, թեև անձայն»: Դրա համար է ՆԱԹ-ը այս համարում ավելացրել անգամ հունարենում գոյություն չունեցող *«երբ անհրաժեշտ է դա անել»* ոչինչ չասող հարվածը, ընթերցողին «անմոռու» հասկացնելու, ուղղելու, թե այս համարում ամեն ինչ վերաբերում է մարդուն⁴, և ոչ ամենևին Նոգուն:

Գործք Բ. 4,17

Ի պաշտպանություն Ս. Նոգու անդամ լինելու, Եհովայի վկաները շար և՛ շահարկում Գործքում նկարագրված Նոգեգալսի օրինակը (Բ. 4,17), պնդելով, թե Սուրբ Նոգին չէր կարող անձ լինել, քանի որ Վերնաբանը նա միաժամանակ նստել 120 հոգու վրա: Մինչդեռ Աստծու ամենագոյությունը՝ ամենուրեք զգնվելը միաժամանակ, Նրա՝ Աստծու հարկություններից մեկն է: Այսինքն՝ նման երևույթը խորք չէ անձին՝ դեմքին: Բավական է միայն դիտարկել Սաղմոս ԸԼԸ. 7-12 համարները⁵, ուր լավագույնս ներկայացված է այդ հարկանիշը՝ ամենագոյությունը՝ ամենուրեք զգնվելը միաժամանակ⁶:

Ո՛ր զնամ ևս քո Նոգուց, կամ քո դեմքից ո՛ր փախչեմ: Եթե երկիրը կլնեմ,

4 Նույնքանի բառացի թարգմանությունն է. Ὡσαύτως δὲ καὶ τὸ πνεῦμα συναντιλαμβάνεται ταῖς ἀσθενείαις ἡμῶν· τὸ γὰρ τί προσευξώμεθα καθὼ δεῖ οὐκ οἶδμεν ἀλλ' αὐτὸ τὸ πνεῦμα ὑπερεντυγχάνει ὑπὲρ ἡμῶν στεναγμοῖς ἀλαλήτοις, որի գրեթե ճշգրիտ թարգմանությունն է հայերենը: KJV էլ գրեթե նույնն է. Likewise the Spirit also helpeth our infirmities: for we know not what we should pray for as we ought: but the Spirit itself maketh intercession for us with groanings which cannot be uttered.

5 Նույնքանի 7-րդ համարն է. ποῦ πορευθὼ ἀπὸ τοῦ πνεύματος σου καὶ ἀπὸ τοῦ προσώπου σου ποῦ φύγω;

6 Աստծու՝ միաժամանակ ամենուրեք զգնվելու սկզբունքը Եհովայի վկաների մոտ չի բնութագրվում, մերժվում է (այս մասին մանրամասն կխոսենք «Մ. Երրորդությունը և Եհովայի վկաները» հարվածում հաջորդիվ):

այնպեղ եւ դու, եթե դժոխք իջնեմ, դրան էլ մոտ եւ: Եթե առաւորայան թեւեր առնեմ ու բնակվեմ ծովի եզերքին, այնպեղ էլ քո ձեռքն ինձ կառաջնորդի, եւ աջդ ինձ կընդունի: Ասացի՝ գուցե խաւարն ինձ ծածկի, կամ գիշերը պատի ինձ իմ վայելքի լույսի փոխարեն: Խաւարը քեզ համար խաւար չի լինի, եւ գիշերը լուսավոր ցերեկ կդառնա, ու նրա մթությունն ինչպես լույս կերեւա՛ւ:

Ինչ վերաբերում է այսպես կոչված *բնակության խնդրին*, ապա կարող ենք ասել, որ բրուկլինյան տրամաբանությունը այդ հարցում դարձյալ *nonsense*-ի շարքից է: Նոր Կրակարանում շարք տեղեր կան, ուր ասվում է մարդկանց մեջ բնակվելու մասին, ընդ որում բնակվողը անդեմ, գործուն ուժ չէ, այլ Հայրը՝ Աստված անձամբ, կամ Որդին՝ Հիսուս Բրիսպոս⁸: Անշուշտ այսպեղից չի կարելի եզրակացնել, որ «բնակվողները»՝ Հայրը եւ Որդին դեմք չունեն, առարկաներ են, գործուն ուժ են:

Բրուկլինյան քարոզիչները Ս. Հոգու դեմ պայքարը շարունակելով՝ չեն կանգնում ոչ մի բանի առաջ. նրանց նպատակը՝ Ս. Հոգուն դեմքից զրկելը, նրանց գերագույն նպատակն է: Նրանք պնդում են, թե Ս. Հոգին Ս. Գրքում երբեք հանդես չի եկել անունով, ինչպես Հայրը, կամ Որդին, այսինքն անուն չունի, անձ չէ, դեմք չունի⁹: Այս տրամաբանությունն էլ չի դիմադրում բնույթաբանության. Նոր Կրակարանում պիղծ հոգիները հաճախ են հանդիպում առանց անունի, բայց նրանք դեմք ունեն, իսկ Ս. Գիրքը բովանդակային առումով նրանց բնությունն է ցույց տալիս՝ **պիղծ**: Իսկ Ս. Հոգու համար էլ Նրա բնությունը՝ **ՍՐԲՈՒԹՅՈՒՆ**¹⁰:

Նոր Կրակարանը լուծում է ներկայացնում հոգիներին, այդ թվում նաև Ս. Հոգուն, բայց որոշակի տարբերությամբ. այնպեղ, ուր խոսքը Ս. Հոգու մասին է, այդ բառը օգտագործված է որոշյալ հոդով՝ տ՛ լուծում¹¹, իսկ «հոգիներին» համար բացակայում է տ՛ հոդը: Այս սկզբունքը, ինչպես տեսնում ենք թվարկված համարներից, պահպանված է թե Յոթանասնիցում, թե Նոր Կրակարանում, չնայած դրանց գրվելու ժամանակների զգալի տարբերությանը¹²:

Ղուկ. Ա. 35

Ղուկասի Ավետարանում նկարագրված ավերման տեսարանը ներկայացնում է միաժամանակ թե Սուրբ Հոգուն, թե Բարձրյալի գործությունը՝ ինչպես ասում են բրուկլինի թարգմանիչները, Եհովայի գործուն ուժը.

7 Հունարեն Յոթանասնից եւ եբրայերենից հայերենը գրեթե չի տարբերվում:

8 Օրինակ՝ Յովի. ԺԴ. 16-17, 23, Եփես. Գ. 17, Գաղատ. Բ. 20 եւ այլն:

9 «Հարկավոր է հավատալ Երրորդությանը», էջ 21:

10 **Рон Родес**, *Вразрез со священным писанием*, էջ 77:

11 Միա այդ համարներից մի բանիս. «Աստծո Հոգին» (Ծննդ. Ա. 2), «Բմ Հոգին» (Ծննդ. Զ. 3), «Բր Հոգին» (Թիմ. ԺԱ. 29), «Տիրոջ Հոգին» (Դավ. Գ. 10; ԺԱ. 29; ԺԳ. 25; ԺԵ. 14), «Սուրբ Հոգին» (Մաղմ. Ծ. 13; Ճեթ. 10, Ղուկ. Գ. 22; Յովի. Բ. 22; ԺԴ. 26; Գործք. Բ. 4; Բ. 28; ԻԱ. 11), «Տիրոջ Հոգին» (Եսայի ԿԱ. 1; Միք. Բ. 7), «Բմ Հոգին» (Յովի. Բ. 28; Զաք. Ա. 6), «Շնորհաբանության Հոգին» (Յովի. ԺԵ. 26), «Նոր Հոգին» (Մարթ. Ժ. 20), «Աստծո Հոգին» (Մարթ. ԺԲ. 28; Ա. Կորնթ. Բ. 11), «Նոր եւ Որդու եւ Սուրբ Հոգու» (Մարթ. ԻԸ. 19), «Բրիսպոսի Հոգին» (Ա. Պետր. Ա. 11) եւ այլն:

12 Մոտ 400 տարի:

Նրեշարակը պատասխանեց և նրան ասաց. «Սուրբ Նոգին կգա քո վրա, և Բարձրյալի գորությունը հովանի կլինի քեզ, որովհետև նա, որ քեզնից է ծնվելու, սուրբ է և Աստծու որդի կկոչվի:

ՆԱԹ-ում այսպես է.

Նրեշարակը պատասխանեց նրան. «Սուրբ ոգին կգա քեզ վրա, և Բարձրյալի գորությունը հովանի կլինի քեզ: Դրա համար էլ այն երեխան, որ պիտի ծնվի, կկոչվի սուրբ, Աստծու Որդի»¹³:

Այսպեղից հետևում է, որ **Սուրբ Նոգին** և **Բարձրյալի գորությունը** նույն բաներն են. «Սուրբ Նոգին կգա», իսկ «Բարձրյալի գորությունը հովանի կլինի». առաջինում դեմքի մասին է, անձի, որ կգա, իսկ երկրորդ դեպքում հովանի լինողը դեմք չունի: Եթե այդ երկուսը նույն բանը լինեին, ապա ավերարանիցը այդ համարը այլ կերպ կգրեր, օրինակ. *«Սուրբ Նոգին կգա քո վրա և հովանի կլինի քեզ», կամ «Բարձրյալի գորությունը կգա քո վրա և հովանի կլինի քեզ»:*

Մարթ. Գ. 11, Եփես. Ե. 18

Այս համարներում Նովիաննես Մկրտիչն ասում է, որ «Նա կմկրտի ձեզ Սուրբ Նոգով և հրով». այսպեղից բրուկլինյան վարդապետները եզրակացնում են, որ Սուրբ Նոգին և հուրը նույն դասին են պատկանում, այսինքն՝ անդամ են, դեմք չունեն, ուրեմն և Սուրբ Նոգին անձ չէ: Այդ պրամաբանությամբ շարունակելով մենք կարող են պնդել, որ Նոմ. Զ. 3-ից էլ հետևում է¹⁴, որ Նիսուս -Քրիստոսն էլ անձ չէ, բանի որ «մահը» անձ չէ, դիմավոր չէ¹⁵:

Նույն խնդիրն ենք քննում նաև Եփես. Ե. 18 համարում:

«Եւ մի՛ հարբեր գինով. դրա մեջ գեխություն կա. այլ մանավանդ լցվեցեք Նոգով»:

Այսպեղ Առաքյալը հրամայում է լցվել հոգով՝ գինու փոխարեն, ինչը նշանակում է, համաձայն բրուկլինյան պրամաբանության, որ **գինին** և **Նոգին** նույն դասից են, այսինքն դիմավոր ձևեր չեն: Բայց հենց այդ նույն թղթում Առաքյալը գրում է նաև.

«Այսինքն՝ ճանաչեք -Քրիստոսի սերը, որ գերազանց է, քան ամեն գիտություն, որ-պեսզի լցվեք Աստծու լրիվ ամբողջությամբ» (Գ. 19) - Աստված լցնում է ամեն ինչ Իրենում:

«Նա, որ իջավ, նույն ինքն է, որ բարձրացավ երկինքներից ավելի վեր, որպեսզի լցնի ամբողջ տիեզերքը» (Դ. 10) - Քրիստոս լցնում է ամբողջ տիեզերքը:

13 Նամեմաբելով հուսարենի հետ (καὶ ἀποκριθεὶς ὁ ἄγγελος εἶπεν αὐτῇ Πνεῦμα ἅγιον ἐπελεύσεται ἐπὶ σέ καὶ δύναις ὑψίστου ἐπισκιάσει σοί· διὸ καὶ τὸ γεννόμενον ἅγιον κληθήσεται υἱὸς θεοῦ) քննում ենք, որ բրուկլինյան թարգմանիչները առիթ բաց չեն թողնում աղավաղելու բնագիրը իրենց դավանաքի համեմատ: Բերված համարում **այն երեխան** չկա բնագրում (պետք էր փակագծերի մեջ վերցնել), իսկ վերջին մասում շարադասությունն են խախտել՝ **կկոչվի սուրբ, Աստծու Որդի**, շեշտելով Նիսուսի միայն մարդ լինելը: ՆԱԹ-ի թարգմանությունից սրացվում է, որ Նիսուս փակավիճակում որպես սովորական երեխա է ծնվելով՝ բոլորի նման և հետո նոր **սուրբ և Աստծու Որդի** է կոչվելու: Մինչդեռ թե բնագիրը և թե հայերենը հստակորեն նշում են, որ ծնվողը **սուրբ** է:

14 «Կամ չգիտե՛ք, թե մենք բոլորս, որ մկրտվեցինք Նիսուս -Քրիստոսով, նրա մահով է, որ մկրտվեցինք»:

15 St'ն **Рон Родес**, *Вразрез со священным писанием*, էջ 77:

«Նա ամեն ինչ հնազանդեցրեց Յիսուսի ուրբերի փակ և նրան հասարակեց, իբրև գլուխ եկեղեցու, բոլոր բաների վրայ, եկեղեցի, որ նրա մարմինն է, լրումը նրա, ով ամեն ինչ լցնում է ամեն բանի մեջ» (Ա. 22-23) - Բրիսպոս լրումն է նրա, ով ամեն ինչ լցնում է ամեն բանի մեջ:

Բրուկլինյան փրամաբանությամբ, ուրեմն, Աստված և Բրիսպոս անդամ են, անձեր չեն - nonsense¹⁶:

Մնում է եզրակացնել, որ բրուկլինյան թարգմանիչները աշխարհում են երկակի սրանդարությունով, մի բան, որ անընդունելի է Ս. Գրքի թարգմանությունը իրականացնելիս:

Բրուկլինյան թարգմանիչները մասնավոր մեկնաբանություն ունեն Յովհ. ԺԴ. 26 համարի վերաբերյալ: Ինքնին հասկանալի է, թե ինչու է նրանց ուշադրության կենտրոնում հայտնվել հենց այդ համարը:

«Իսկ Մխիթարիչը՝ Սուրբ Նոգին, որին Նայրբ կուղարկի իմ անունով, նա ձեզ ամեն բան կուսուցանի և ձեզ կհիշեցնի այն ամենը, ինչ ես ասացի ձեզ»:

ՆԱԹ-ում այսպես է.

«Բայց օգնականը* սուրբ ոգին, որ Նայրբ կուղարկի իմ անունով, նա[#] ամեն բան կսովորեցնի ձեզ և կհիշեցնի այն ամենը, ինչ ասացի ձեզ»:

«Օգնական» բառի վրա դրված է հղում. «Դամ «մխիթարիչը»: Իսկ «նա»-ի հղումն է՝ [#] «Նա»-ն (արական սեռի) վերաբերում է «օգնականին» (արական սեռի):

Նրանք մեկնում են այսպես. այն որ հոգու մասին հաճախ ասվում է, թե նա խոսում է, սովորեցնում է, լսում է, դեռ չի նշանակում, որ նա դիմավոր է, անձ է: Բացի այդ *նա* արական սեռի դերանունը, որ կապված է *հոգու* հետ, միայն բերականական կանոններին հետևելն է նշանակում, քանի որ «մխիթարիչ»-ը արական սեռ ունի¹⁷:

Այս է պարզապես, որ ՆԱԹ-ը փախչում է այդ համարի վերաբերյալ այդ երկու «գիտական» բացատրությունները. Սուրբ Նոգու անձ լինել-չլինելու խնդիրն է այսպես արձարժվում, քանի որ օգրագործված է նրա համար անձնական դերանուն՝ «*նա*»: Նույն այդ գլխում Նիսուս ասում է. «Ես ես պիտի աղաչեմ Նորը, և նա **մի այլ** Մխիթարիչ պիտի փառ ձեզ, որպեսզի հավիտյան ձեզ հետ բնակվի»¹⁸ (ԺԴ. 16):

Այսպես օգրագործած **մի այլ** Մխիթարիչ - ἄλλον παράκλητον նշանակում է «ուրիշ նույն սեռից»¹⁹: Նիսուս ասում է, որ կաղաչի Նորը, որ ուղարկի ուրիշ Մխիթարիչ,

16 Տե՛ս անդ:

17 «Նարկավո՛ր է հավաքալ Երրորդությանը», էջ 22, փես նաև **Рон Родес, Вразрез со священным писанием**, էջ 79, **Զարեհ արք. Ազնաուրեան**, Մեկնություն Նայսափանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցույ Նախարարին, էջ 270-290, **Խորեն արեղա Առաքելյան**, Ս. Երրորդության մասին՝ Ենովայի վկաների ուսմունքի քննադատությունը, Ս. Էջմիածին, 2010, էջ 55-59:

18 Նուսարեմն է. «καὶ ἐγὼ ἐρωτήσω τὸν πατέρα καὶ ἄλλον παράκλητον δώσει ὑμῖν ἵνα μένη μεθ’ ὑμῶν εἰς τὸν αἰῶνα»:

19 **Рон Родес, Вразрез со священным писанием**, էջ 79:

այնպիսին, ինչպիսին Ինքն է, այսինքն մի այլ Անձ, որ պիտի ներկայացնի Իրեն, իսկ այդպիսին կարող է լինել միայն դիմավոր անձնավորություն, և ոչ թե անդեմ գորություն:

Իսկ այն պնդումները, թե «*նա*» և «*մխիթարիչ*» բառերը արական սեռի են, իսկ «*հոգին*»՝ չեզոք, ուստի չեն կարող նույնանալ, դարձյալ քննադատության չի դիմանում. Գոյականի սեռը արքայապետում է նրա քերականական ձևը, և ոչ թե այդ բառով արքայապետած առարկայի ֆիզիկական սեռը: Երբևք չի կարելի ենթադրել, որ չեզոք սեռի բառերը անշունչ առարկաներ են: Ս. Գրքում կան բազմաթիվ համարներ, ուր չեզոք սեռի գոյականներով (տժ հոդով) և դերանուններով (սժ հոդով) արքայապետվում են դիմավոր ձևեր: Օրինակ. Ղուկ. Ա. 41, Բ. 16-ում *մանուկ* բառը, նույնը՝ Մարկ. Ե. 39-41-ում, Մաթթ. Թ. 24-25-ում *սղջիկ* բառը, Մաթթ. ԺԲ. 24-28-ում *սխիծ հոգիներ* բառը, Եբր. Ա. 14-ում *հրեշտակ* բառը և այլն: Ընդգծված բառերը անշունչ չեն, այլ անձնավորություններ են: Բայց Ս. Գրքի հեղինակները երբևք և ոչ մի փոքր չեն օգտագործում չեզոք սեռի դերանուն «*հոգի*» չեզոք սեռ ունեցող բառի հետ, երբ այն վերաբերում է Սուրբ Հոգուն²⁰:

(Շարունակելի)

ՂԵԻՈՆԴ ՔԱՎՆԱ ՄԱՅԻԼՅԱՆ

20 Տե՛ս անդ: